

ՀՀ Արմավիրի մարզի Ամասիայի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ Ամասիա գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ պաշտոններն զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / ծածկագիր 3.1-1/

Առաջատար մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, մասնակցում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստական աշխատանքներին, իրականացնում է հաշվապահական ներկայացման, հաշվետվությունների ստուգման, ամփոփման և ներկայացման աշխատանքները, կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

2. ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / ծածկագիր 3.1-2/

Առաջատար մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հողի հարկի և գույքհարկի գանձումը, տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքները, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

3. ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ / ծածկագիր 3.3-3/

2-րդ կարգի մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2-րդ կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է
-միջնակարգ կրթություն

-սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի բ ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն
-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 2013 թվականի ապրիլի 26-ին ժամը 12-ին, 14-ին, 16-ին Ամասիայի գյուղապետարանի վարչական շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս /

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար դիմողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմ/ների/,

վկայական/ների/, աշխատանքային գրքույքի /բացակայության դեպքում տեղեկանք համապատասխան վայրի/ պատճենները բնօրինակների հետ միասին,

-արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

-մեկ լուսանկար 3x4 չափսի,

-Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների բացակայության մասին հայտարարություն:

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր Ամասիայի գյուղապետարանի շենքում և ՀՀ Արմավիրի մարզպետարան բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013թ. ապրիլի 12-ին ժամը 18-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ամասիայի գյուղապետարան / հեռ. 094 70-91-82/: ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳԱԿՎ վարչություն / հասցեն ք. Աբովյան 71, հեռ. 0237 2-07-70/

Ամասիա համայնքի ղեկավար

Գ.Մանուկյան